ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020-82

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Մասնակից՝ «Ագաստ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրերով գնանշման հարցում, անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46-23-20»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4133-2020 գրությամբ «Ագաստ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 13.03.2020թ.-ի թիվ 09.1/3131-2020 գրության հիման վրա, 17.03.2020թ.-ին «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 17.03.2020թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020-82 համարի ծածկագիրը և 17.03.2020թ.-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

25.03.2020թ.-ին, 13.04.2020թ.-ին և 16.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.04.2020թ.-ին:

2. ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 13.03.2020թ.-ի թիվ 09.1/3131-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևայլը.

«ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 05.02.2020թ. կնքվել է թիվ ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46-23-20 ծածկագրով պետական գնման պայմանագիրը, սակայն «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում չի ներկայացվել որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով: Գնահատող հանձնաժողովը որոշել է միակողմանի լուծել կնքված պայմանագիրը՝ հիմք ընդունելով պայմանագրի 8.15 կետը:

Ելնելով վերոհիշյալից՝ խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկել համապատասխան միջոցներ:»:

Պատվիրատուն ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

3. <u>«Ագաստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 18.03.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ագաստ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4133-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Հիմնական գլխավոր պատճառը այն է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ պայմանագիրը կնքելուց հետո տեղի ունեցան իրավիճակի սրընթաց զարգացումներ: Աշխարհում կորոնավիրուսի հետևանքներով ստեղծվող իրավիճակից և օր-օրի այդ իրավիճակի վատթարացումից ելնելով ստեղծվում էր բարդ իրավիճակ տարբեր ուղղություններով, թե՛ տնտեսական, թե՛ ֆինանսական, թե՛ լոգիստիկ և այլև, որի արդյունքում հնարավորություն չստացվեց և չկարողացանք 2020թ.-ի մարտի 6-ին կնքել առաջարկված համաձայնագիրը, համաձայն որի մատակարարումները պետք է իրականացվեին մինչև 2020թ.-ի ապրիլի 15-ը, չնայած և մեր գործադրած ջանքերի տարբեր ճանապարհներով առաջացած տնտեսական խնդիրներին լուծում գտնելու:

Կազմակերպությունը փորձեց իր կողմից բոլոր հնարավոր տարբերակներով աշխարհում այս ճգնաժամային իրավիճակում ստեղծված ֆինանսական, տնտեսական և լոգիստիկ խնդիրները հաղթահարել և լուծումներ գտնել: Եվ այդ բարդ իրավիճակում, անելով հնարավորին ամեն ինչ, գտանք ելքեր և մատակարարեցինք ապրանքներ, ինչպես նաև հենց էկոնոմիկայի նախարարությանը, նույն գյուղատնտեսության ծրագրերի համար տարբեր պայմանագրերով (կնքված ընդամենը մի քանի օր առաջ), սահմանված կարգով, ներկայացնելով բանկային երաշխիկներ:

Ստացանք ապրանքներ անհավանական պայմաններում, ընդամենը ժամերի կամ օրերի տարբերությամբ ճանապարհներ փակվելուց առաջ: Մատակարարումներ կատարեցինք նաև ՀՀ-ում ՀՀ կառավարության կողմից մարտի 16-ին արտակարգ իրավիճակի պայմաններում:

Ուզում ենք նշել նաև, դեղագործական ուղղվածություն ունեցող մեր կազմակերպությունը բացի անասնաբուժական այս պատվաստանյութերի

մատակարարումից, աշխատելով աշխարհում և Հայաստանում ստեղծված այս ճգնաժամային պայմաններում, զբաղվել է նաև մարդկանց համար նախատեսված պատվաստանյութի և դեղորայքի մատակարարումով:

Այս ճգնաժամային իրավիճակում փորձելով դրական լուծումներ գտնել, դիմել ենք նաև ՀՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարություններ աջակցություն ստանալու նպատակով, որպեսզի այս վերջին գործընթացն էլ ապահովենք, սակայն չենք ստացել դրական արձագանք: Վերջին անգամ դիմելուց 10 օր անց ՀՀ կառավարությունը ՀՀ-ում մտցրել է արտակարգ իրավիճակ:

Ուստի ելնելով այն փաստից, որ մեր աշխատանքը կառուցել ենք աշխարհում տիրող ճգնաժամային, ֆորս-մաժորային իրավիճակում, այլ ոչ թե ընթացիկ սովորական պայմաններում, նաև հաշվի առնելով, որ այդ բարդ իրավիճակում ունենք մի շարք ապրանքների պատշաճ մատակարարումներ նույն էկոնոմիկայի նախարարությանը, խնդրում ենք Ձեզ ընբռնումով մոտենալ սույն հարցին և չներառել մեր կազմակերպությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում:»:

Ներկայացված լրացմամբ, Մասնակիցը հավելել է նաև հետևյալը.

«Ի լրումն մեր կազմակերպության կողմից ներկայացված դիրքորոշմանը, ուզում ենք նաև տեղեկացնել, որ այս ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը այս նույն չափաբաժինների համար, որոնք գտնվում են Ձեր վարույթում, հայտարարել է նոր մրցույթ:

Չնայած նրան, որ իրավիճակը աշխարհում նոր կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված գնալով էլ ավելի է վատթարացել, սակայն, մյուս կողմից, այս ընթացքը մենք օգտագործեցինք նրա համար, որպեսզի կարողանանք ապահովել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքները գյուղատնտեսության ծրագրի համար և, ունենալով լրացուցիչ ժամանակ, ստեղծեցինք հնարավորություն այդ չափաբաժինները մատակարարելու համար և մասնակցեցինք նոր մրցույթին:

Թե՛ նախորդ մրցույթին, թե՛ հիմա գնառաջարկ ներկայացրել էր միայն մեր կազմակերպությունը, միևնույն ժամանակ ուզում եմ շեշտել, որ ավելի ցածր գնային առաջարկ, քան նախորդ մրցույթով:

Սրանով ուզում ենք ևս մեկ անգամ ընդգծել, որ այն ժամանակը, որը նորմալ պայմաններում մեզ կբավականացներ այս ողջ գործընթացը կազմակերպելու համար, այս արտակարգ իրավիճակներում քիչ էր, դրա համար էլ հայտնվելով լրացուցիչ այս ժամանակը

1 ամիս, մենք գործադրեցինք բոլոր ջանքերը, որպեսզի ավարտին հասցնենք ստանձնած պարտավորությունները, ինչը և հիմա անում ենք.

Ապրանքները գնվել են և ճանապարհին են դեպի Հայաստան:

Ուստի հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, և ի նկատի ունենալով վերոնշյալ ինֆորմացիան, խնդրում ենք Ձեզ ընբռնումով մոտենալ սույն հարցին և չներառել մեր կազմակերպությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում:»:

4. <u>ՍՑ-LO-2020-82 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 05.02.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46-23-20» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի առարկայի համաձայն՝ Մասնակիցը պարտավորվել է կատարել Պայմանագրի թիվ 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի մատակարարում:

Պայմանագրով սահմանվել է նաև, որ մատակարարումն իրականացվելու է համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում և կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

www.gnumner.am համացանցային կայքում 11.03.2020թ.-ին հրապարակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 05.02.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46-23-20» ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունների դադարեցման մասին հայտարարություն:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4133-2020 գրությամբ «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի

բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-

ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 05.02.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46-23-20» ծածկագրով պետական գնման Պայմանագրի առարկայի համաձայն՝ Մասնակիցը պարտավորվել է կատարել Պայմանագրի թիվ 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի մատակարարում:

Պայմանագրով սահմանվել է նաև, որ մատակարարումն իրականացվելու է համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում և կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

www.gnumner.am համացանցային կայքում 11.03.2020թ.-ին հրապարակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 05.02.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46-23-20» ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունների դադարեցման մասին հայտարարություն:

Սույն գործի փաստերի, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշման հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, «Ագաստ» ՍՊԸ-ն, օբյեկտիվորեն հնարավորություն ունենալով կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, հրաժարվել է դրանք կատարելուց, հրաժարվել է համաձայնագիր կնքելուց, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի 8.15 կետի դրույթներով սահմանված պայմանները:

Պայմանագրի 7-րդ գլխով սահմանվել է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Մասնակիցը ներկայացրած դիրքորոշմամբ և լրացմամբ՝ Բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չի կարողացել կատարել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Մասնակիցը չէր կարող կանխատեսել կամ կանխարգելել: Հատկապես երբ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն է հայտարարվել 16.03.2020թ.-ին՝ ՀՀ կառավարության թիվ 298-Ն որոշմամբ, այն դեպքում երբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 05.02.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/46-23-20» ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունների դադարեցման մասին հայտարարությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է մինչև արտակարգ դրություն հայտարարելը՝ 11.03.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Պայմանագրի 7-րդ գլխով սահմանված անհաղթահարելի ուժով պարտավորություններից ազատվելու հնարավորությունը ռեալ է, այսինքն՝ ծագում է արդեն իսկ ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում, իսկ պարտավորությունները սույն դեպքում կարող էին առաջանալ համաձայնագրի կնքման ուժով, ինչպես նախատեսվել է Պայմանագրի 8.15 կետով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, դադարեցրել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Անդրադառնալով Մասնակցի կողմից գրությամբ ներկայացված այն դիրքորոշմանը, որ «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից կնքված տարբեր պայմանագրերի շրջանակներում տարբեր կազմակեպությունների, ինչպես նաև՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, ՀՀ կառավարության կողմից մարտի 16-ին արտակարգ դրություն հայտարարված լինելու պայմաններում մատակարարվել են ապրանքներ, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ դրանք սույն Ընթացակարգի քննության շրջանակներից դուրս են և դրանցով չեն հաստատվում Մասնակցի կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չկնքելու անհնարինության հանգամանքը: Առավել ևս, որ դրանցով հերքվում են Մասնակցի այն փաստարկները, որ համաձայնագրի կնքման

արդյունքում, դրանով ստանձնած պարտավորությունները անհնարին էին լինելու կատարել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ագաստ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած համաձայնագիր կնքելու պարտավորությունը, որը հանգեցրել է պայմանագրով ստանձնած պարտավորությունների դադարեցմանը: Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4133-2020 գրությամբ «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020-82 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ագաստ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ